

խումբ մը Ապուզափր Արծրունին եւ Նորա քեռորդին Սահակ Ապամբղեմ քաջ մարդը գլուխ իրենց դրած սկսան կռուիլ եւ կոտորեցին եւ աւար առին ճուաշ եւ թոռնաւան:

Այս ապստամբութիւնը ճնշելու համար զանազան ամիրայք տաճկաց խումբ-խումբ կը դիմէին Վասպուրական հրամանաւ Բուղայի. հայք երբեմն կը յաղթէին եւ երբեմն կը յաղթուէին, թշնամիք հոս կը զօրանային, հոն կը տկարանային: Վիճակն անիշխանութեան էր: Եւ պէտք էր հնարք գտնել երկիրը կործանմանէ ազատելու համար:

Սմբատ Սպարապետ ան ատեն ներկայացուց Գուրգէն Բուղայի, պատմեց թէ ինչպէս սա յունաց դէմ քաջութիւններ ըրեր էր, թէ ինչպէս կայսրը զինք Կոստանդնուպոլիս հրաւիրեր եւ Նա Նախամեծար համարել էր իրեն դիմել: Ուստի Բուղայի հրամանաւ Գուրգէն արաբաց բանակը Նստաւ առ ժամանակ մը սպասելով աստուծոյ օգնականութեան:

Բայց քաջ Ապուլմբղեմի մահուանէն ետք Վասպուրականի վիճակը երբ վատթարացաւ եւ Վասակ մը Արծրունեաց ցեղէն երբ գնաց Ռշտունեաց Ոստանը Նստաւ իբրեւ տէր աշխարհին առանց կարէնալու սանձել տաճկաց բռնութիւնքը, եւ փոքրիկ բռնաւոր մ'էլ ինք դարձաւ. Գուրգէն ոչ էւս կրցաւ համբերել եւ յարկ համարեց Ամբատայ հետ առանձին տեսութիւն մ'ընել այս նիւթիս համար:

— Վասպուրականի երկիրը, Հայոց Սպարապետ,— ըսաւ,— քեզ յանձնուած է ի Բուղայէ, եւ հիմա քանի որ դու պարտաւորուած ես այդ մարդուն քսուէնք անբաժան մնալու, կ'իմանամ թէ անիշխանութեան մէջ կը թաւալի, եւ շատ մը փոքրիկ եւ տեսակ-տեսակ բռնաւորաց տակ կը հեծէ. պէտք է՞ արդեօք այդ վիճակին դարման տանիլ:

— Ես այդ մասին Նաեւ շատ կը մտածեմ, քու քաջութեանդ վրայ կասկած չունիմ եւ կը փափագիմ Նաեւ,— պատասխանեց Սմբատ աչքերը շուրջ դարձնելով, որ միգուցէ իր ըսածը ոք լսէ,— կը փափագիմ Նաեւ այս վիճակին դարման գտնել: Կարելի է շատերը